Հավելված 2
2023թ. «01» «26»-ին
Կնքված N ԴՏՊ-1160-11012/Ե-3/23 պայմանագրի

Դրամաշնորհային հաշվետվություն N ԴՏՊ-1160-11012/Ե-3/23

1. Ընդհանուր տեղեկատվություն

Ծրագրի անվանումը՝	Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալ-վերականգնողական աջակցություն ցերեկային կենտրոնում. Երևան
Դրամաշնորհի N	ԴՏՊ-1160-11012/Ե-3/23
Դրամաշնորհատու կազմակերպություն	«Լիարժեք կյանք» ներառական հասարակության խթանման հասարակական կազմակերպություն
Ծրագրի իրականացման ժամանակատված	01.01.2023 – 31.12.2023
Հաշվետու ժամանակահատված	01.01.2023 – 31.12.2023
Ներկայացման օր	17.01.2024
Հաշվետվության պատասխանատու	Գոհար Գևորգյան Գործառնական տնօրենի պարտականությունները կատարող

2. Բովանդակային հաշվետվություն

2.1 Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված միջոցառումների շրջանակներում կատարման ենթական գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար

Միջոցառում 1. Շահառուների ընդունելության կազմակերպում բազմամասնագիտական թիմի կողմից, կարիքների բազմակողմանի գնահատում ԱՀԿ ՖՄԴ մեթոդաբանությամբ:
Միջոցառում 2. Գնահատման արդյունքում սոցիալ-վերականգնողական անհատական և խմբային ծրագրերի կազմում:
Միջոցառում 3. Սոցիալ-հոգեբանական վերականգմանն ուղղված ծառայությունների տրամադրում:
Միջոցառում 4. Ապահովել ցերեկային կենտրոնում շահառուների զբաղվածությունը տարբեր հմտություններ զարգացնող խմբակներում:
Միջոցառում 5. Հանրային միջոցառումներ և ԶԼՄ լուսաբանում:
Միջոցառում 6. Տուն այցերի /շարժական կամ մոբիլ ծառայություն /կազմակերպում հաշմանդամություն ունեցող երեխաների և նրանց ընտանիքների համար:
Միջոցառում 7. Ազատ ժամանցի և մշակույթային միջոցառումների կազմակերպում
Միջոցառում 8. Անկախ կյանքի դրական ծնողավարման վերաբերյալ թրեյնինգներ, սեմինարներ երիտասարդների և նրանց ընտանիքների համար:
Միջոցառում 9.Իրավաբանական խորհրդատեղեկատվական աջակցություն ընտանիքներին առողջապահական, սոցիալական և կրթական հարցերի շուրջ:
Միջոցառում 10. Շահառուների 7-օրյա ամառային հանգիստ «Լիարժեք կյանք» ամառային ներառական ճամբարում

2.2 **Խնդրում ենք նկարագրել ծրագրի առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի /Գանտի աղյուսակ/ և միջոցառումներ, նշելով՝ Ձեր կողմից կատարված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար:**

Միջոցառում 1. Համաձայն աշխատանքային պլանի /Գործողություն 1/ իրականացվել է շահառուների ընդունելության կազմակերպում և բազմամասնագիտական թիմի կողմից կարիքների բազմակողմանի գնահատում՝ ԱՀԿ ՖՄԴ մեթոդաբանությամբ, որի արդյունքում իրականացվել է թվով **47** շահառուի կարիքների գնահատում: Գործողությունը 1-ը /համաձայն աշխատանքային պլանի/ ամբողջությամբ կատարված է:

Միջոցառում 2. Համաձայն աշխատանքային պլանի /Գործողություն 2/ անձի կարիքների բազմակողմանի գնահատման արդյունքում բազմամասնագիտական թիմի կողմից կազմվել է թվով **47** շահառուի սոցիալ-վերականգնողական անհատական ծրագիր: Գործողություն 2-ը /համաձայն աշխատանքային պլանի/ ամբողջությամբ կատարված է:

Միջոցառում 3. Համաձայն աշխատանքային պլանի /Գործողություն 3/-ի թվով **47** շահառուի տրամադրվել է սոցիալ-հոգեբանական ծառայություններ՝ խմբային և անհատական պարապմունքների միջոցով, նպատակ հետապնդելով զարգացնել շահառուների մոտ ինքնասպասարկման, կենցաղավարման, հաղորդակցման և շարժողական հմտությունները: Գործողություն 3-ը /համաձայն աշխատանքային պլանի/ ամբողջությամբ կատարված է:

Միջոցառում 4. Համաձայն աշխատանքային պլանի /Գործողություն 4/-ի հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել են ապլիկացիաների պատրաստման, նկարչաթերապիայի, շոկոլադաթերապիայի, և արտթերապևտիկ տարբեր խմբակներ: Գործողություն 4-ը /համաձայն աշխատանքային պլանի/ ամբողջությամբ կատարված է:

Միջոցառում 5.

- Հունիսի 1-ին Երեխաների պաշտպանության օրը կենտրոնի շահառուները մասնակցեցին կենտրոնի ներսում կազմակերպված միջոցառմանը:

Միջոցառում 6. Համաձայն աշխատանքային պլանի /Գործողություն 6/-ի թվով **2** շահառուների տրամադրվել են հոգեբանական արտակենտրոն ծառայություններ: Գործողություն 6-ը /համաձայն աշխատանքային պլանի/ ամբողջությամբ կատարված է:

Միջոցառում 7.

- Փետրվարի 6-ին «Լիարժեք կյանք» ՀԿ-ն «Դեպի ներառական Հայաստան» ծրագրի շրջանակներում Երևանի թիվ 17 հատուկ դպրոցում կազմակերպեց «Սպորտ՝ բոլորի համար» միջոցառումը: Միջոցառման ընթացքում հաշմանդամություն ունեցող շուրջ 60 անձինք ծանոթացան բոչիա, անվասայլակով բասկետբոլ և կույր ֆուտբոլ ադապտիվ սպորտաձևերի հետ, այնուհետև մասնակցեցին ընկերական և մրցաշարային խաղերին: Գործողություն 7-ը /համաձայն աշխատանքային պլանի/ ամբողջությամբ կատարված է:
- Հունիսի 15-ին կենտրոնի 3 շահառուները մասնակցել են «Կարիտաս Արեգակ հիմնադրամ»-ի կողմից կազմակերպված «Մրցելու հնարավորություն» սպորտային միջոցառմանը:

Միջոցառում 8. Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել է հետևյալ սեմինարները, կենտրոն հաճախող շահառուների և կենտրոնի բազմամասնագիտական թիմի համար՝

- 17.01.2023թ - դասընթացի թեմա՝ «Սեռահասունություն», դասընթացավար սոցիալական աշխատող՝ Հենրի Գևորգյան, մասնակիցների թիվ՝ 12:
- 27.03.2023թ – դասընթացի թեմա՝ «Ընդհանուր գիտելիքներ էրգոթերապիա մասնագիտության և զգայական ինտեգրացիայի մասին», դասընթացը վարեց՝ էրգոթերապիստ Լաուրա Իսկանդարյանը, մասնակցիների թիվ՝ 6:
- 27.03.2023 – Դասընթացի թեմա՝ «Խոսքային զարգացման խանգարումներ», դասընթացը վարեց՝ լոգոպեդ Կարինե Առաքելյանը, մասնակցիների թիվ՝ 6:
- 31.04.2023թ - «Շոկոլադաթերապիա» վարպետաց դաս կենտրոն հաճախող շահառուների և իրենց ծնողների համար, դասընթացը վարեց արտեթերապիստ՝ Մարինե Հակոբյանը, մասնակիցների թիվ՝ 8:
- 26.06.2023թ - կենտրոնի լոգոպեդ՝ Կարինե Առաքելյանը հաշմանդամություն ունեցող անձանց ծնողներին ներկայացրել է սեմինար «Դիսգրաֆիա և դիսֆլեքսիա» թեմայով:
- 26.06.2023թ - կենտրոնի հոգեբան՝ Ղումաշյան Լուսինեն հաշմանդամություն ունեցող անձանց ծնողներին ներկայացրել է սեմինար «Ուշադրություն, ուշադրության խանգարումներ» թեմայով:
- 26.06.2023թ - կենտրոնի էրգոթերապիստ՝ Լաուրա Իսկանդարյանը և կինեզիոլոգ՝ Աշոտ Շահինյանը ծնողներին ներկայացրել են ՄՈՒԿ ունեցող երեխաների դիրքավորման առանձնահատկությունները և հիմնական սկզբունքները:
- 30.08.2023թ - կենտրոնի հոգեբան՝ Ղումաշյան Լուսինեն հաշմանդամություն ունեցող անձանց ծնողներին ներկայացրել է սեմինար «Տարիքային ճգնաժամերը և դրանց առանձնահատկությունները» թեմայով: Մասնակիցների թիվ՝ 7:
- 30.08.2023թ - կենտրոնի լոգոպեդ Կարինե Առաքելյանը հաշմանդամություն ունեցող անձանց ծնողներին ներկայացրել է սեմինար «Դիսֆագիա, կլման ակտի խանգարում» թեմայով: Մասնակիցների թիվ՝ 6:
- 30.08.2023թ - կենտրոնի արտթերապիստ Մարինե Հակոբյանը կենտրոն հաճախող շահառուների ծնողների և երեխաների համար կազմակերպել է շոկոլադաթերապիա բաց դաս:
- 04.12.2023թ - սեմինարի թեմա՝ «Տարիքային վախերը և դրանց հաղթահարման ուղիները»: Սեմինարը անցկացրել է հոգեբան՝ Լ.Ղումաշյանը: Մասնակցել են 13 ծնող:
- 04.12.2023թ - սեմինարի թեմա՝ «Խոսքային խանգարումները զգայական խանգարումների համատեքստում» Սեմինարը անցկացրել է լոգոպեդ Կ.Առաքելյանը: Մասնակցել են 13 ծնող:
- 04.12.2023թ - սեմինարի թեմա՝ «Անձնական օգնականի տրամադրման կարգն ու պայմանները»: Սեմինարը անցկացրել է սոցիալական աշխատող Ս. Հարությունյանը: Մասնակցել են 13 ծնող:
- 04.12.2023թ - սեմինարի թեմա՝ «Հատուկ մանկավարժության դերը ԿԱՊԿ ունեցող երեխաների հետ աշխատանքում»: Սեմինարը անցկացրել է Հատուկ մանկավարժ Ա.Օրդյանը: Մասնակցել են 13 ծնող:

Գործողություն 8-ը /համաձայն աշխատանքային պլանի/ ամբողջությամբ կատարված է:

Միջոցառում 9. Համաձայն աշխատանքային պլանի /Գործողություն 9/ հաշվետու ժամանակահատվածում թվով **89** քաղաքացու տրամադրվել է սոցիալ-իրավական, առողջապահական խնդիրներին առընչվող աջակցություն և խորհրդատվություն: Գործողությունը 9-ը /համաձայն աշխատանքային պլանի/ ամբողջությամբ կատարված է:
Միջոցառում 10. Համաձայն աշխատանքային պլանի /Գործողություն 10/ կենտրոնի թվով **5** շահառուներ իրենց 7-օրյա ամառային հանգիստն են անցկացրել Ստեփանավանի «Լիարժեք կյանք» ամառային ներառական ճամբարում:

Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝

Ստորև ներկայացվում է կենտրոնի ամենօրյա աշխատանքները լուսաբանող ֆեյսբուքյան խմբի հղումը https://www.facebook.com/groups/452821606274977/

2.3 Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատածում քաղաք դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են ծրագրի գործողությունների իրականացմանը

Հաշվետու ժամանակահատվածում դժվարություններ չեն առաջացել:

2.5 Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել ծրագրի աշխատանքային պլանով, բայց իրականացվել են ծրագրի նպատակին հասնելու համար

- Հունվարի 19-ին Երևանի փոխքաղաքապետ Տիգրան Ավինյանը այցելեց «Լիարժեք կյանք» ՀԿ Երևանյան կենտրոն, ծանոթացավ իրականացվող աշխատանքների և կենտրոն հաճախող շահառուների հետ: Փոխքաղաքապետը կենտրոնին նվիրեց մի շարք զարգացնող խաղեր և դիդակտիկ պարագաներ:
- Փետրվարի 16-ին կենտրոնի էրգոթերապիստ՝ Լաուրա Իսկանդարյանը և կինեզիոլոգ՝ Աշոտ Շահինյանը մասնակցեցին Ուիգմոր Երեխաների հիվանդանոցում կազմակերպված «Վերականգնումը կաթվածից և գլխուղեղի վնասվածքից հետո» թեմայով տեսագործնական դասընթացին:
- 13.03.2022 թ-ին կենտրոնի բազմամասնագիտական թիմը մասնակցել է Կարմիր Խաչի Հայաստանյան գրասենյակի կողմից անցկացվող «Արտակարգ իրավիճակում առաջին օգնության կազմակերպման» 8 ժամյա տեսագործնական դասընթացին:
- 20-24.04.2022թ-ին կենտրոնի կինեզիոթերապիստ՝ Աշոտ Շահինյանը, էրգոթերապիստ՝ Լաուրա Իսկանդարյանը և գործառնական տնօրեն՝ Տաթևիկ Ղազարյանը մասնակցել են «Վերականգնողական բժշկության միջմասնագիտական վերապատրաստում» թեմայով 40-ժամյա տեսագործնական դասընթացին:
- 01.04-02.04.2023թ-ին կենտրոնի լոգոպեդ՝ Կարինե Առաքելյանը և էրգոթերապիստ՝ Լաուրա Իսկանդարյանը մասնակցել են «Ներառում Հայաստան» ՀԿ-ի կողմից կազմակերպված «Հաշմանդամություն ունեցող երեխաներին տրամադրվող սոցիալական ծառայությունները ՀՀ-ում: Երեխաների այլընտրանքային խնամք» և «Հաշմանդամություն ունեցող անձանց ներկայացնող կազմակերպությունների դերը որոշումների կայացման և քաղաքականությունների մշակման գործընթացներում» թեմաներով դասընթացներին:

- 07.04.2023-ին Էրգոթերապիստ՝ Լաուրա Իսկանդարյանը մասնակցել է «Սորս» հիմնադրամի կողմից կազմակերված՝ «Հազվագյուտ հանդիպող հիվանդություններ ունեցող երեխաների զարգացման առանձնահատկություններ, բազմամասնագիտական վարում և խնամք» թեմայով դասընթացին:
- 17.05.2023-19.05.2023 կենտրոնի սոցիալական աշխատող՝ Մարիամ Բաղալյանը մասնակցել է ՀՀ Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստուտի կողմից կազմակերպված՝ «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքները և ծառայությունների մատուցման առանձնահատկությունները.վերականգնողական օգնությունը և դրա տրամադրումը,տրամադրման կարգն ու պայմանները» թեմայով եռօրյա դասընթացին:
- 07.04.2023 Էրգոթերապիստ՝ Լաուրա Իսկանդարյանը մասնակցել է «Սորս» հիմնադրամի կազմակերված ՝ «Հազվագյուտ հանդիպող հիվանդություններ ունեցող երեխաների զարգացման առանձնահատկություններ, բազմամասնագիտական վարում և խնամք»թեմայով դասընթացին:
- Մայիսի 18-ին կենտրոնի լոգոպեդ Կարինե Առաքելյանը մասնակցել է «ԱՄՆ-ում Չեխիայի Հանրապետությունում գործող անձնական օգնականի ծառայության ներդրման» ծրագրի տեղեկատվական հանդիպմանը:
- Կենտրոնի լոգոպեդ՝ Կարինե Առաքելյանը հունիսի 18-ին մասնակցել է Լոգոպեդների հայկական ասոցիացիայի կողմից կազմակերպված «Լոգոպեդը որպես միջդիսցիպլինար և վերականգնողական թիմի անդամ բժշկակա-սոցիալական ոլորտում» գիտաժողովին:
- 10.07.23թ.- Կենտրոնի սոցիալական աշխատող Մարիամ Բաղալյանը մասնակցել է «Հաշմանդամություն ունեցող երեխաների սոցիալ-ներառական խթանում» ծրագրի ամփոփիչ հանդիպման քննարկմանը
- 06.07.23թ.- Կենտրոնի լոգոպեդ Կարինե Առաքելյանը մասնակցել է «Անձնական օգնականի ծառայության փորձարկումը ՀՀ-ում, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող երեխաների շահերի պաշտպանության ռոզմավարությունները և շահերի պաշտպանությունը մեդիայում» թեմայի քննարկմանը
- 01.07-04.07 կենտրոնի հոգեբան Լուսինե Ղումաշյանը մասնակցել է «EduArmenia2023 համահայկական գիտակրթական չորրորդ աշխատաժողովին»:
- 19.08.2023 թ-ին Հոգեբանի կենտրոն՝ Ղումաշյան Լուսինեն մասնակցել է՝ «Վախի հաղթահարման տեխնիկաներ» Այգ հոգեբանական կենտրոն:
- 18.09.2023թ.-ին «Լիարժեք կյանք» ՀԿ-ի բազմամասնագիտական թիմը մասնակցել է՝ «Իրական աշխարհ, իրական մարդիկ» ՀԿ-ի կողմից կազմակերպած «ՄԻԱՎ-ով ապրող և ԹՆՕ կանանց նկատմամբ գենդերային հիմքով բռնության դեմ հակազդում ՀՀ-ում» թեմայով սեմինարին:
- 11.09.2023-13.09.2023թթ-ին կենտրոնի համակարգող Սվետլանա Հարությունյանը մասնակցել է՝ ՀՀ Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտի կողմից կազմակերպված «Երեխաների իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը» վերապատրաստման և որակավորման բարձրացման դասընթացին:
- 26.09.2023թ կենտրոնի լոգոպեդ Կարինե Առաքելյանը մասնակցել է՝ Հոգեսոցիալական կարգավորման կենտրոնի կողմից կազմակերպած «Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող ընտանիքների և խնամողների հոգսի թեթևացում» դասընթացին:
- 29.09.2023թ կենտրոնի սոցիալական աշխատող՝ Սվետլանա Հարությունյանը և հատուկ մանկավարժ՝ Անուշ Օրդյանը մասնակցել են ՀՀ ԱՍՀՆ կողմից կազմակերպած «Regional Family Placement» համաժողովին:

- 10.10.2023թ-ին կենտրոնի սոցիալական աշխատող՝ Սվետլանա Հարությունյանը մասնակցել է «ԵՄ- ն հանուն գենդերային հավասարության բարեփոխումների աջակցության ծառայություն» ծրագրի և «Ագաթ» հաշմանդամություն ունեցող կանանց իրավունքների պաշտպանության կենտրոն հասարակական կազմակերպության աջակցությամբ կազմակերպված «Հաշմանդամություն ունեցող կանանց իրավունքները Հայաստանում» պանելային քննարկմանը:
- 22.10.2023թ.- ին կենտրոնի հոգեբան՝ Լուսինե Ղումաշյանը մասնակցել է Հայաստանի Հոգեթերապևտների Ասոցիացիայի կողմից կազմակերպված «Հոգեբանական աջակցություն արտակարգ իրավիճակներում» թեմայով սեմինարին:
- 25.10.2023թ-ին կենտրոնի հոգեբան՝ Լուսինե Ղումաշյանը մասնակցել է Հայաստանի Հոգեթերապևտների Ասոցիացիայի կողմից կազմակերպած «Սուր սթրեսային համախտանիշի կայունացում երեխաների համար» թեմայով սեմինարին:
- 26.10.2023թ.-ին կենտրոնի հոգեբան՝ Լուսինե Ղումաշյանը մասնակցել է «Սանտե Արմենի» կազմակերպության կողմից կազմակերպված «Հոգեբանական տրավմա» գիտաժողովին:
- Հոկտեմբերի 23-ից 25-ը կենտրոնի գործառնական տնօրեն Տաթևիկ Ղազարյանը, մասնակցել է Ասիական զարգացման բանկի և ՀՀ ԱՍՀՆ -ի կողմից կազմակերպված «Disability reform in Armenia: Enhancing collaboration for global impact» գիտաժողովին:
- 07-08.12.2023թ «Լիարժեք կյանք» ՀԿ-ի հոգեբան՝ Լուսինե Ղումաշյանը, լոգոպեդ՝ Կարինե Առաքելյանը, սոցիալական աշխատող՝ Սվետլանա Հարությունյանը մասնակցել են ՄԱԶԾ-ը, ՅՈՒՆԻՍԵՖ-ի, ՄԱԲՀ-ի, UNPRPD, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աջակցությամբ, կազմակերպված 2-օրյա դասընթացին՝ «Ֆունկցիաների միջազգային դասակարգման (ՖՄԴ) կիրառման ճանապարհային քարտեզը» թեմայով:

Գործառնական տնօրենի
պարտականությունները կատարող Գ.Գևորգյան

«Լիարժեք կյանք» ՀԿ նախագահ Ս.Մաղաքյան

Digitally signed by MAGHAKYAN SUREN 3312720087
Date: 2024.01.17 18:06:29 AMT